

ՏԱՋԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԻՆ - ԽՄԱՍԳԻՐ
ՋԱՐՄԱՅԻՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻՐԻՆԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 12 ՓԵՏՐՎԱՐ 1911

ԹԻԻ 5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ հղերին	ՄԱՆԳԱԿՈՒՆԻ
Քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ, Ա.— Ե. դարուն	ԳԱԶՐԻԷ
Կոչ (Քերթուած)	ԼՈՒՍՆԹԱԿ
Կեանքի ՆՊԱՏԱԿԻՐ, Ի՞նչ ենք, Ո՞ւրիշ կուգանք, Ո՞ւր կ'երթանք	ԼԷՈՆ ՏԸՆԻ
Ներկայ Ընկերակցականութիւնը	ԱՌԱՋՆՈՐԴ
Մամուլ Աղօթքը (Քերթուած)	ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ
ՄՈՌՅՈՒԱՆ ԷՋԵՐ, — Աղբը եւ Ս. Գիրքը	ՄԲ. Հ. Մ. ՍԼԷՆ
ՄԱՄԼՈՅ ԱՐՁԱԳԱՆԴ, — Դրուագ մը՝ Տաբերնակ Հայրապետին կեանքէն	
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ, — Շաբթուան լուրեր եւ ժողովաց որոշումներ	

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱԶԵԹ»

9, ճամի Գաբուսու, 9

ՀԱՆԱԹԻԱ



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 12 ՓԵՏՐՎԱՐ 1911

ԹԻԻ 5

ՀԱՅ ԿՂԵՐԻՆ

Ներուի ինձ ուղղել խնդրանքներս մեր Հայ Կղերին, եթէ մի քիչ պատշաճութեան տանձնէն և կամ իրաւունքէն ալ դուրս ըլլայ:

Երբ Հայ Ժողովուրդը դադարաւորի, կարծիքի ու գործնականի դէմ յանդիմանութիւններու ստեղծուած հրապարակի մը վրայ կը գտնուի և օրէ օր կը միարձուի հոգ, ինչո՞ւ խոր լուսթիւն մը կղերին կողմէ:

Սա՛ ինչ որ ալ ըլլայ՝ վիճակ մըն է որ բարդ ու հանգուցաւոր, անել ու չատնել դրութեան մը մոլորուն խաբխախումներուն տաճնորդողի դերը վրոն տաւծ է: Ամեն դիէ խօսք մը, ամէն անձէ սկզբունք մը, ամէն կաղմուսորումներէ տարբեր տարբեր հայկացիներ զիրար հակասող, դործի ու գործնականի մէջ ընդվզեցուցիչ, այսպէս որոշումներ, աստղերու հանգոյն ծնող ու մնունող, երբեմն հրամաններ, նաեւ որոտող պատգամներ, ու այս ամենը՝ չարչրուած քրքրուած ժողովրդի անուններ, յանուն տարաբախտ ու միշտ դժբախտ Հայուն յանուն նաեւ արդարութեան, հաւա-

սարութեան, եղբայրսիրութեան(?), բայց իրականին ու գործնականին մէջ ցաւալիօրէն որչափ հեռի... ու քանի՞ մղոններով:

Այս ստեղծուած անսպասելի ու անբաղձալի վիճակին ի դարման, և կամ կտսեցումին ի խնդիր, Հայ Կղերն իր փոքր և մեծ աստիճանաւորներովն որչափ ջանաց, քանի՞ մտածեց, ու չե՞նք կրնար ըսել թէ պարզապէս հանդիսատես մը եղաւ և ցարդ կը շարունակէ սառն այս անտարբերութիւնը: Սա ալ ակն յայտնի ճշմարտութիւն մըն է թէ այն երջանկաբեր թուականին աւելի սկսաւ սուր հեգնանք մը, կծու վիրաւորանքներ, տարրական քաղաքավարութեան հակառակ ընթացքներ, պատշաճութեան սահմանէ անդին ցոյցեր մեծ բաժինը եղան նոյն այն կղերին՝ զոր այժմ կը մեղադրենք: Բայց այս ամենը պիտի կրնայ ներկայի և ապագայի բոլոր մեղադրանքներէն զերծ կացուցանել Հայ Կղերը, որ կոչուած է Սիրոյ Վարդապետին աշուկերութեանը և անձնդիր հովուութեանը, պիտի կրնայ այս պարտականութենէն ինքզինք ազատ համարիլ, երբ Սիրոյ Վարդապետը փոխան թշնամանքի, թուքի և մուրի և անլուր հայհոյութիւններու, նոյն Սէրը կը շաւղէր և Հօրմէն ալ կը խնդրէր՝ «Հայր

թող դոյսս զի ոչ գիտնն զինչ դարձնն», ու քաջ ու արթուն հովիւի պէս անձը զրաժ ոչխարներու պահպանութիւնն, կը կոտակէր Առաքեալներուն. — Արածէ՛ ոչխարներո, արածեցէ՛ք դառնութիւնս :

Աւետարանի պաշտօնեայ Հայ կղեր, զուն չէ՞ս կարգար, չէ՞ս լսեր, այն քու անբաժնի պատգամը չէ՞ որ քեզի կուգայ վերսկէն ու քու պարտադրութենէդ . ո՛ւր է քու ներկիւն մեծութիւնդ, ո՛ւր նաեւ քու հովութիւնդ . այդպէս քննադատ ու փոխելի էր սուրբ պարտաւորութիւնդ, այդպէս վախկոտ ու թուլամորթ հովիւի պաշտօնն էր որ այն քան փափաքանօք առած էիր, և միայն խաղաղ օրերու համար . . . Քու աշակերտութիւնդ չի կեդրոնանար լոկ մայրաքաղաքի և անոր շրջանակներու (փայլուն ու ծիծաղուն) մէջ փութկոտելու և ճարտարւորելու, չի սահմանափակուիր ծոյլ ու թոյլ անխռով հանգիստի մը մէջ :

Հայ կղեր, քու Առաքելութիւնդ լոկ քարոզութեան, դիւրատար կեանք ու կենցաղի անձուկ շրջակային մէջ չի կայանար, և ո՛չ ալ հարուստ ու ջով մեռելներու թաղման հանդէսին, կամ լոյսի փողփիւններու տակ ճոխ հարսնիքներու ներկայ գտնուելուն՝ մէջ : Հայ կղեր, քահանայապետիդ պատուէրը այս չէ՞ր. — Յուպ մը ձեռքիդ, մախաղ մը ուսիդ, դնա՛ քարոզելու, մկրտելու, աշակերտեցնելու արդարութեան, հաւատարմութեան ու եղբայրութեան . ուրեմն ի՞նչ է քու փառքէդ ու հանգստէդ, ի՞նչ է քու պարտականութեանդ հրապարակը, շրջի՛ր, քարոզի՛ր, համայնի՛ր, հովուէ՛, հսկէ՛, աւանդորդէ՛ եղբայրութեան, յարգանքի, համակրանքի, խաղաղութեան մշտադաւար մարդագեանին վրայ մակաղեցնելու . մեղմիւ խրատէ, անկեղծ խօսէ, սիրով գգուէ, անուշ փայփայէ, ճիշտ ժամանակին ու պէտքին տունն ալ յանդիմանէ, մի՛ քաշուիր . անոնք սիրով պիտի ընդունին, երբ քեզ տեսնին պաշտօնի բարձրութեան, սրտի անկեղծութեան և հոգիի վեհութեան մէջ : Առաջնորդէ՛ Մովսէսի նման, մատակարարէ Ահարոնի հանդոյն, և որպէս Յեսու դատաւորէ իւրաքանչիւրի պարտքի բաժնիւր : Այն ատեն տոկոսութեան պարխաչները պիտի

փլին, սիսի ու մախանքի գեանքը պիտի կենան ևս դառնան, և դուն յայսկոյս Յարդանանը պիտի ողջունես ժողովուրդովդ :

Այո՛ երբեմն ալ ու ձախ պիտի մտորին ու չլմորին, խորապետ ձորերու մէջ, սաւրտ ու սառնոտ սարերու, լպրծուն սաւառանդներու վրայ պիտի թարթափին, ծործոր ու ծմակ է պիտի կարթնտին . բայց դուն մի թուլանար, ձայն տուր, մականդ ձօճէ՛, սրինգդ գեղեղեղէ ու եղանակէ էն հոգեղմայլ թրթիռները, շնչովդ ու քաղցր հալումդ խօսուան . ցոյց տուր արեւադարկ, ցրտահար ճակատդ և յապի ու յողովդ կուրծդ . ու այս ամենը պիտի բերին շուրջիդ ցրիւ ցրիւ եղած քու գառնութիւնդ, ու այն վտանգները որոնք քու լինիներուդ շուրջը օգակ մը չլնած էին ջարդ ու փշուր պիտի լինին : Երբ վտանգէն երկնչիս, աշխատութենէ փախիս, դառնութիւնդ բմբոստութենէն սրամտիս, պիտի կրնաս դահութիւնը ունենալ իրեւ պարտականութիւն ունենալ պաշտօնեայ . — Ո՛չ երբեք : Ահա՛ պաշտելի, խաչալ, խնկելի կողմի քու պատուական Վարդապետիդ որ դեռ այնքան թարմ կը հնչէ խաչած արմնջներուդ թէ՛ «Ասով ճանչնան մարդիկ թէ քո աշակերտներս էք, երբոր մէկգմէկսիրէք» :

Հայ կղեր, պիտի կրնանք ընդունիլ նայնչափ սիրով երբ արդիւնքովը տեսնենք թէ կը սիրէք . եթէ կը սիրէք ի՞նչ են այս բաժանումները, պատակասունները, մէկմէկու ուղղուած անուանարկութիւնները, շատ անգամ ազեղ հայոյանքները եղբայր եղբոր դէմ, ծնողը զաւկին, զաւակը ծնողին, մեծը փոքրին, փոքրը մեծին . յարգանքի պակաս, համակրանքի նստադում, սիրոյ փոխադարձ ու բաղարձակ չգոյութիւն : Եւ ահա ասոնց տեսուր հետեւեանք այժմու սոսկալի կայութիւնը, ազգակոտորման ընթացքի մը վերերեւումը :

Հայ կղեր, քու վզիդ պարտքը չէ՞ գուրս ու յառաջ նետուիլ հայրական դաժնի ու գորովի ի սպաս դնելու Յովհաննէս պատուական Առաքեալին ու Աւետարանչին պէս, և բոկելու . «Եղբայրներ, մէկգմէկ սիրեցէք» : Եթէ այդչափ անտարբեր ես ու անհոգ պիտի դիտես այս եղբայրասպան մար-

սուր, ոտակա՝ Վարդապետէդ որ պիտի գոչէ՝ «Գայէք ինձմէ»։ Եթէ չես կրնար ազդել, գիտցիր, պատճառ մը կայ մէջտեղը, և այդ՝ քու անձիդ օրինակն է. ուստի շուտ շուտ փոխէ ընթացքդ ու անա պիտի ազդես ու անոնք պիտի պատկառին։ Հայ կղեր, աշակերտութեանդ մէջ անձնական հանգիստ, անձուկ եւ ու շահու տեսակէտ մի՛ փրնուներ, և թաղնուելու յենակէտ մի՛ որոներ, յաւանտախ ու իրախտի դիրք մի՛ ստաներ, կեղծաւորի ու շողքորթի վերարկու մի՛ հագնիր, աղաոս ու ստոր բարք, մեղկ ու հեղգ վարք, թոյլ ու ծոյլ կեանք, հաճութի ու վայելքի կենցաղ մի՛ ունենար. զի աշակերտէ մը սրչափ սէր նոյնչափ աշխատութիւն կը պահանջուի, որչափ աշխատութիւն նոյնքան սրբութիւն, որչափ սրբութիւն նոյնչափ համբերութիւն, երկիւզածութիւն, հաւատարմութիւն, հեղութիւն ու վեհանձնութիւն կը պահանջուի։ Ասոնք մարմնաւորէ սրտիդ, հոգիիդ, ու անձիդ և պաշտօնիդ վրայ։

Առաջները դուն քեզ կը չքմեղացնէիր, տեսալ մը արդարացում մէջտեղ կը գլտուէիր, ամէն պահսա ու վնաս Համբախի և իր դամարիլային բեռնակով. բայց անոր անկումէն ու զլորումէն վերջը ի՞նչ ըրիր։

Հայ կղեր, անա ժողովրդիդ վիճակը. ամէնը պաղիր սուեր են սպասաւորած, աշակերտած Եկեղեցիէդ. մէկը Եկեղեցին կ'անարգէ, միւս մը կրօնը կը քամահրէ, ուրիշ մը հաւատքը բռնողադուշանք կը սեպէ։ յոյսը մնում, սէրը հաւած, տաճարը մննկեցած, ընտանեկան որբութիւններ խախտած, Զիրմուանդի, բարեպաշտի օճախներ անհետացած։ Ո՛ւր են քու նախնիքներդ. տատուածապաշտ ոգիքը, հաւատաշեւալի թիփերը, անկեղծ ու աննկնղ եկեղեցաւորութիւնը, կրօնի կենդանի ու ճշմարիտ նախնաձայնողութիւնները։ Ի հնումն լիքն էին ամենով, այսօր պարսպութիւնով կը փայլին։ Ի հնումն չէն ու չող ամէն ինչ, այժմուս քայքայուած ու նսեմացած, ի հնումն սուրբ պաշտում, խորին ու անկեղծ վերաբերում, այսօր պաշտամունքի թուլացում ու թերացում, երկրպագութեան ապաշնորհ անհոգութեան

թիւն։ Հայ կղեր, մի՛ ցաւիր ևւ մի՛ ալ կրեմիական ողբերգներ հիւսեր, այլ կորովով մը դուրս եկ, խոստովանէ քաջաբար քուկդ եղող թերութիւնները։ Այո՛, դուն ա՛լ ի հնումն բարձրութեան, վսեմ ու վեհութեան, անվիճելի հայրենասիրութեան, անխարդախ հաւատքի ու բարեպաշտութեան մէջ փայլող քու սրբողոսն Նախնիքներուդ ոգիէն զուրկ ես, ու գէթ ճիշդ մը, ճիշդ մը, զարթուած մը չես ունենար, գոնէ անոնց շուղին հետեւելու բարի կամեցողութիւն մը։ Դուն խուռն ժողովրդեան մը, փառազարդ սեղանի ու խնկաբայր միջնորդախ մը առջև ծուռկի եկած, ուխտած ու երդումած ես ծառայելու, հովուելու՝ եսդ ու անդ ուրացած։ Այժմու լուրը, սպասողի դեր ստանձնելդ ինչո՞ւ պիտի վերադրենք. չես հաճիր ի յուշ ամեկութէ Գրիգոր Լուսաւորիչ մը Ազգ մը ողջոյն լուսաւորութեան առաջնորդեց. դու քու դասերովդ չե՞ս կրնար ժողովուրդ մը համերաշխութեան, քրիստոնէական եղբայրսիրութեան բերելու։ Ներսէս մեծ մը հիւանդներու, անկեղեցիներու, ծերերու, բուրոններու դարմանատուններ կանգնեց բիւրաւոր, դուն այսօր քու մէկ հատիկ դարմանատունիդ կողմը անգամ չես նայիր։ Վանքերով ու մննաւորաններով անգամ մըն ալ հպարտացուց Հայուն հպարտ լեռները, ու անոնց մէջ հիմեր կը գնէր ապաւայի, մտքի լուսաւորութեան ու զարգացման շաղախներով։ Դուն այսօր անոնց վրա տակնորուն վրայ նայուածք մը իսկ չես նետեր, գոնէ երկու պուտ արցունք...։ Սահակ Պարթև, Մեղրուկ Մաշեկաց մը լեզուի վեհապետութիւնը թագաւորեցուցին, միակ միջոցը Ազգի պահպանութեանը. դուն հիմակ հաճութիւնը անգամ չես ունենար գէթ այցելութիւններով տեղեակ լինելու թէ մեր յոյն ու ապագան (աշակերտութիւնը) ինչո՞ւ կը անանի, ինչո՞ւ կը կրթուի։ Մօնա՞նք Մանգակունի, Օճնեցի, Շնորհալի, Լամբրոնացի, պատմագէտ, մատենադիր, Եղիշէ, Խորենացի, Անձևացի, Նարեկացի, այսպէս հոյլ մը ևւ բոյլ մը պատուականներու ու պատմականներու անունը, սրունք ոչ թէ լսկ դրչով ու խոս-

քով, այլ անձով ու ներկայութիւնով ներկայ դանուեցան իրենցներուն մէջը թէ՛ պատերազմի դաշտին, թէ՛ անձաւ ու քարանձաւներու մէջ, թէ պալատներու եւ թէ միջին բանտերուն խորշին կռուեցան այլ կռուցին, պատերազմեցան լսոյց կոփեցին անպարտելի զօրութիւնը՝ չը տարսիլ, չը թուլանալ, չը ձուլուիլ, ո՛չ անկող ու փերէ, ոչ մեծ խոտառմանիւ եւ ոչ ալ չարահասար մեքենայութիւններէ: Հայ կղեր, հիմակ քու ժողովրդեանդ չտպաւնար ո՛չ Պարսկի նենդ ու բիրտ գիւտնադիտութիւնը, ոչ Թաթարական մարդախուշ յարձակումները, ոչ ալ Արաբական արշաւանքները, եւ ոչ իսկ Համլտի գիւտնաար մեքենայութիւնները: Բայց էն սոսկալին... քու տունդ քակող՝ անմիաբանութիւնը, քու հաւատքդ խախտող՝ երկմտութիւնը, տուներդ փճացնող՝ անարութիւնը անա եւաթանի սուր մագիչներով քու ու ժողովրդիդ սիրտը կը ճանկրանն խոցեր ու վերքեր բանալով: Ուրեմն սոսկա՛, սարսուէ՛, զի տանդ հիմարը անկող հեղեղներ կը սարսն: Եղիբ, վեր կեցիր թմբիւրէդ, քունէդ: Ղուտնդ երէցներու պէս մաքառէ, փախուստի դարձուր, Յովսէփներու պէս աղօթքի կեցիր սրբանուէր ու բոլորամուէր, իջի՛ր հօտիդ մէջ, անուշ ձախիկդ ու ձնիկդ լսելի ընել տուր, կրկին դաւթէն ներս մտցուր որ չփռնկտի այն թշուառին սուրբէն արիւնդուայ սիրտը, խուզուած ու գողգողած գեղմի: Մի քաշուիր ճիշտն ու ճշմարտոր խօսելէ: Ո՛չ հարուստին շողոքորթէ, ո՛չ աղքատին անսուսէ, ո՛չ չէզոք կամ անտարբերին ամէն ըսածներուն հաւան եղիր, եւ ոչ կուսակցականներու ամէն ըսածին հաւատակը ըմբռնէ: Ո՛չ գիտնականին ծառայ եղիր եւ ո՛չ աղէտին տէր ու աղա: Այլ ամէնուն հանդէպ եղեր հայր մը՝ զորովով ու գութով լեցուն, ամէնը հաւատար սիրէ, անկեղծօրէն հովուէ՛: Ամէնուն համարաշխութիւնը, հաշտ ու խաղաղ բնակիլը պիտի կրնայ գեղեցիկ արդիւնքներ բերիլ: ով որ սիրոյ չաշակերտեցներ՝ մեղապարտ է, ով որ արդարութիւնով, ճշմարտութիւնով, խաղաղութիւնով չի մկրտեր ու մկրտուիր, վա՛յ է անոր: զի իր ձեռ-

քովը գայթակղութիւն կը ծնի ու կ'ածի: Դուն, Հայ կղեր, Որդի Մարդոյ դէտ կացիր ժողովրդիդ գլխին, երբեք մի՛ երկնչիր ո՛չ մահէն ու սպառնալիքէն, եւ մի՛ քաշուիր թուք ու մուրէն, մի՛ տատամսիր հարուած հալածանքէ, երբէ՛ք, զի Ամենակարողին Աջն ու Խաչը քեզի հովանի է, ու տոտով հովանաւորէ ամենը, ամէն դատարարը, զի ամէնը քուկդ են: Խախտ մի՛ դներ, այլ հօկէ՛, հովուէ, ներէ, երբեմն ալ սատուէ՛, յանդիմանէ՛: անա քու սուրբ եւ նուիրական, նոսե հայրենասիրական պարտաւորութիւնդ ու իրաւունքդ: զի տես թէ ճշմարտութիւնը ճշմարտութիւն է, քարոզելէ մի՛ վախնոր, իբրեւ Արեւակ ամպերու անդի մի՛ տար, խաւարը մի՛ սիրեր ու այս բացարձակ անկեղծութիւնով ու պոշածնի գիտակցութիւնով կը լինի: Ու մնը կը սպասնը:

ՄԱՆԳԱՆՈՒՆԻ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԱՐՏԻՈՍԱԳՐՈՒԹԻԻՆԸ

ԳՐԻՍՏՈՆԵՈՒԹԻԻՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ
Ա. — Ե. ԴԱՐԵՐՈՒՆ

(ՈՍԿԵԱՆՔ, ՍՈՒՔԻԱՍԻԱՆՔ, ԱՏՈՄԵԱՆՔ)

Ամէն Հայ՝ որ ազգասիրութեան եւ եկեղեցասիրութեան զգացումները կը կրէ, երբեք անապոքեր չի կրնար մնալ անցնող եւ յառաջիկայ եօթնեակներուն մէջ կատարուող առնմային սուրբերու յիշատակին հանդէպ: Որքան ալ ուժացած ըլլայ մէկը՝ այլապէս պատճառներով՝ Եկեղեցիի կազմակերպութենէն եւ նիւթական շէնքէն, սա՛ օրերն անպատճառ իր երակներուն մէջ պիտի զգայ շրջանառութիւնը կաթիլ մը արիւնի՝ որ յնցող եւ ոգևորող գաղափարներու աղբակներէն ատկ կը սողոսկի: Ճշմարտ Հայ արիւնին կաթիլն է ան, որ դարերէ ի վեր եւեւեփելով, յաճախ պոթկացած եւ հոսած է դուրս, վարդերամղելու համար՝ մարտիրոսի մը աղօս յիշատակին հետ՝ ամ-

բողջ ազգի մը մերթ տոգոյն և մերթ սեւ-
ցած պատմութիւնը :

* *

Թագէտս և Բարթոլոմէոս առաքեալներու
քարոզութիւնով Քրիստոնէութիւնը
Հայաստան մուտ գտնելէն և մեր առաջին
Լուսաւորիչներու ժամանակակից կամ քիչ
յետոյ կատարուած նահատակութեան դէպ-
քերէն վերջ՝ որոնք գրեթէ ամէնքն ալ ազ-
գային զրոյժ կը կրեն, մինչև Լուսաւորիչի
ատենը քիչ անգամ կը հանդպինք բուն իսկ
Հայ Մարտիրոսներու : Ասոր պատճառը թե-
րևս պէտք է նկատել Հայաստանի թագա-
ւորներուն՝ ուրիշ իրենց նմաններէն նուազ
հալածող ըլլալուն :

Ըստ աւանդական պատմութեան ա-
ռաջին դարու կիսուն Սանատրուկի հալա-
ծիչ քաղաքականութիւնն ա՛լ իր խառու-
թիւնը պէտք է կորսնցուցած ըլլայ, քանի
որ իր յաջորդներուն մէջ, մեր երեսնդ,
Արտաշէս Բ. Արտաւազդ Բ. Տիրան Ա.
Տիգրան Գ. Վաղարշ Բ. և Խոսրով Ա.
թագաւորները ներքին և արտաքին ան-
վերջանալի պատերազմներով զբաղած էին :
Ասոնց ատեն ոչ միայն Հայ Եկեղեցիին,
այլև երկրին քաղաքական պատմութիւնն
ալ չփոթ է, և շատ դժուար կ'ըլլայ այսօր
այդ ատենուան օտար պատմիչներու և
մերս Խորենացիի տուած տեղեկութիւննե-
րը, յիշած դէպքերը և նոյն իսկ իշխողնե-
րու տնտնները իրարու հետ հաշտեցնել
կամ նոյնացնել : Մէկ խօսքով եթէ ոչ Ա.
դարը, սոկայն Բ. դարը կատարեալ քառս
մըն է մեր պատմութեան մէջ՝ ուր իցնալ և
թափառել դրութեանս սահմաններէն դուրս
կը մնայ :

Վերը յիշուած եօթը Հայ թագաւոր-
ներէն հալածող նկատուած են միայն Ար-
տաշէս Բ. և որդին Արտաւազդ Բ. : Այս
վերջինը ներկայացուած է իբրեւ պո-
սաաէր, բայց ոչ անշուշտ Ներսիսի մը խմո-
բէն՝ որ շաղուտած էր Քրիստոնէոյ նահա-
տակներու արիւնով : Տիգրան Գ. ի և Վա-
ղարշի համար յիշատակութիւն մը չկայ թէ
ինչ դիրք բռնած են հետդիտէ տարած-
ուող նոր դաւանանքի յարողներուն հան-
դէպ, բայց Մեծն Խոսրովի համար Խորե-

նացին Փիրմիրիանոսէն աւնելով կը գրէ .
«Բաղում վկայեալս և ի Խոսրովու, ի մե-
րում աշխարհի» :

Սրբարեւ շատ նահատակութիւնները կըր-
նան կատարուած ըլլայ մեր աշխարհին մէջ
Խոսրովի կամ ուրիշ թագաւորներու օրով
և ձեռքով . բայց անշուշտ բոլոր մարտի-
րոսներն ալ Հայ չէին, և ընդհանրապէս
օտար ազգերէն Հայաստան տպաւորուած
կրնան նկատուիլ, քանի որ ինչպէս ըսինք՝
մեր թագաւորներու պատգամ վիճակը, և
Հռոմէական կայսրութեան ալ արեւելեան
սահմանադրուի ըլլալով՝ մեր երկրին կայս-
րերու հալածանքներուն ուղղակի չենթար-
կուիլը տալիճան մը ապահովութիւն կու-
տային նորադարձներուն :

Այսպէս թէ ահպէս, Բ. դարուն մեր
հողին վրայ կատարուած նահատակութիւն-
ներուն ածնելի սուրբերը Հայեր չէին :
Սոկայն կրօնքը հայրենիք և ազգ չունի .
նահատակի մը արիւնը ուր որ թափած է,
և որոնց համար ու որոնց ձեռքով որ
հեղուած է, հոն է մարտիրոսին տօնն ալ,
հայրենիքն ալ, ազգն ալ : Ահա այս լայ-
նամիտ տեսութեան հետեւանքն է անշուշտ
մեր տօնացոյցներուն մէջ Հռոմէացի, Յոյն, Ա-
սորի, Հրեայ և այլն սուրբերու խճողումը,
որոնցմէ շատը կամ ուղղակի յարաբերու-
թիւն ունեցած են Հայ Եկեղեցիին դա-
ւանութեան հետ, և կամ մեր երկիրը և մեր
սահմաններուն վրայ նահատակուած են :

Աւանդ օրինակի համար Ոսկանները :
Կ'ըսուի թէ ասոնք Հռոմէն ունէ դեռ
պանութիւնով Հայաստան կողգային, երբ
պատանեցան Թագէտս առաքեալին և լու-
նով անոր երկնային քարոզութիւնները
ու տեսնելով զերբնական հրաշքները, հա-
ւատացին և մկրտուեցան : Իրենց պետը՝
որ յունարէն Խրիւսի (=Հայերէն ոսկի)
անունը կը կրէր, քահանայ ալ ձեռնա-
դրուեցաւ, և իր չորս ընկերներուն հետ
մտաւ Արտաշէսի պալատէն ներս իր դես-
պանական պաշտօնը կատարելու, միւս
կողմանէ չմոռնալով նաեւ իր նոր հաւատ-
քը քարոզելու թէ՛ արքունիքին մէջ և
թէ անկէ դուրս ժողովուրդին մէջ : Այս
հինգ նորանդարձները երբեմն ալ մայրա-

քաղաքին մօտ Ծաղկոտն գաւառի Ծաղկէոյ լեռները ճգնութեան կ'ելլէի։

Արտաշէսի արքունիքը եւ Բ. դարու Հայ աղետականութիւնը ամենազեղիս եւ ամենավատթար բարքերով մոլորած կը տեսնենք։ Եւ տօնիկա ալ ուրիշ պատճառ մըն էր որ բարձր գամէն մաքուր կեանքի բաղձադրները սիրով եւ եռանդով փարէին Աւետարանի գերազանց բարոյակաւորին։ Յայտնի է աւանդական պատմութիւնէն թէ Արտաշէս Ալանաց իշխանին Սաթինիկ աղջկան հետ ամուսնացած էր։ Հաւանական է որ այս առիթով իր ազգականներէն մէկ քանին եւ իր երկրացիներէն ալ շատեր Հայաստան՝ արքունիքին մօտ բնակութիւն հաստատած ըլլային։ Ասանց մէջ կը յիշուի Հայ թագուհիին աւելի մեքձաւոր իշխան մը Բահադրա աւանը, որ տեսնելով Ոսկեաններու առաքինի կեանքը, կը հետեւի եւ կը մկրտուի, ընդունելով Սուքիաս անունը։ Իրմէ կ'ընդօրինակուին ուրիշ 18 ալան կամ աղուան(?) իշխանազուններ ալ, որոնք տարի մը զաղանի կը պահեն իրենց քրիստոնէութիւնը։ Սակայն յետոյ կը յայտնուի եւ զիւր չգար առիկա Հայ բաղբիշին՝ Սաթինիկի՝ որ իր խեղ ու խելառ Արտաշէսի զաւակին ձեռքով Ծաղկէոյ լեռներուն մէջ նահատակել կուտայ նախ իր ազգակիցներուն վարժապետը՝ Ս. Ոսկի քահանան եւ իր չորս ընկերները, հաւանաբար Քրիստոսի 120 թուականին։

Այս նահատակութենէն վերջ Սուքիաս եւ ընկերները՝ Ղուկիանոս, Պօղիկաէս, Կոդրատոս, Անտիոքոս, Իդեքսիւքիրոս, Մենիտոս, Փոկաս, Սերգիոս, Դամբրիոս, Ադրանիոս, Զոսիմոս, Փիլիտորիոս, Դաւիթոս, Յորդանէս, Անատոս, Թէոդորոս, Յակարոս եւ Թէոդոս(*) կը փախչին Բագրեւանդի Սուկաւէս լեռը (այժմ Բէօսէ-Տաղ)։

Բայց իրենց փախուստին լուրը մինչեւ իրենց հայրենիք կը հասնի, եւ իրենց զիրքին ու ատրիճանին համեմատ ալ խուզար-

կութեան կ'ենթարկուին։ Ալանաց երկրէն Փարլահա իշխանը յատկապէս կուգայ Սուկաւէս, եւ շատ թախտնձանքներ վերջ երբ կը տեսնէ թէ անոնք քրիստոնէական հաստքի մէջ անդրդուելի կը մնան, ծեծով եւ ցիցերով կը սանջէ, եւ յետոյ Սուքիասէն սկսելով մինչեւ 17 հասր սուրով կը սպաննէ, խնայելով երկու կրտսերագոյններուն, որոնք իրենց նահատակ եղբայրները թաղելէ վերջ՝ ճգնութիւնով կ'ապրին եւ յետոյ Վաղարշակեանի մօտ խաղաղ մօտով կը կնքեն իրենց սուրբ կեանքը, հաւանաբար Բ. դարու կէսէն յետոյ։

Գ. եւ Դ. դարերուն կատարուած նահատակութիւնները, Տրդատի նախաքրիստոնէական հալածանքի հրովարտակները, Հռիփրիմեաններուն խողովոցումը, Լուսաւորչի եւ իր սերունդին բազմաչափ կեանքը՝ իրենց տոնախմբութեան առիթով նկատի կ'առնուին։ Մենք հոս չեղաւ կ'ուզենք Ս. Գրիգորի վերջին շառաւղիքին՝ Մեծն Սահակ Հայրապետին կատարած զործունէութեան մէկ արգելանքը, երբ մահաւանդ այդ վհօզի եւ անձնուրաց սուրբին աօնն ալ կը կատարուի Ոսկեանց եւ Սուքիասեանց եօթնեակին շարափ օրը։

Ս. Սահակ եւ իր անմահ զործակիցը Ս. Մկրտոյ՝ ստեղծելով Հայ գիրքը եւ քրիստոնէութեան Կապարանները Հայ տառերով Հայ Ազգին մասշտի ընելով, աւանդանալի է թէ մեծապէս նպաստեցին Հայ ինքնադիտակցութեան զարթոնքին եւ անսովի թուով մը կանգնեցին հայեցի Աստուածաշունչով եւ Մատենադրութիւնով՝ մէկ կողմէ Յունական կրօնամուտ հասանքին եւ միւս կողմէ Պարսկական կրօնապաշտ հեղեղին դէմ։ Այս է պատճառը որ Հայաստանեայց Եկեղեցիին տօնած Սուրբերու շարքին մէջ թէ, թիւով եւ թէ՛ որակով միշտ առաւելութիւն ունին մեր Ազգային Սուրբերը, Հայերէն Ս. Գիրքով անած եւ համարուած Հայ նահատակները, Ե. դարուն եւ անկէ մինչեւ մեր օրերը։


Անցեալ եօթնեակին մէջ ստանցմէ կը գտնենք Առովմեան զօրավարները։ Երբ 444 թուականին Պարսիկներու Յաղկերտ

(*)Աս անունները մկրտութեան ասեն դրուած են եւ ընկալու են թէ յունական պիտի ըլլային քանի որ մկրտողը Հռոմայեցի էր։

արքան առաջին անգամ հրովարտակ հանեց որ իր բոլոր հպատակները ընդունին Մադ-գէականութիւնը կամ կրօնապաշտութիւնը, Քուչաններու հետ պատերազմի բռնուած էր արդէն, եւ իր հպատակ ազգերու բանակներն ալ իրեն օգնելու համար պատերազմի դաշար տարած էր: Հրովարտակին տղղեցութեան տակ բանակին մէջ ալ բանութիւնք սկսան, բայց Հայ օմանդակ զօրքը՝ Աստու Գնունի եւ Մանածիւր Ռշտունի զօրավարներու առաջնորդութիւնով, խոյս տուաւ այդ բանադատութիւններէն եւ մտաւ Հայաստան: Սակայն Յաղկերտ զօրք հանեց անոնց հետէն: Ռշտունիայ գաւառին մէջ Պարսիկ զօրքը հառաւ Հայ գաւառին եւ Աստու Գնունի նախ իր գեղեցիկ եւ մաաղաչ գաւառիկը՝ իր սրտահատոր դաւաճանոց սուրբն զոհ տալէ վերջ, ինքն ալ անմուտնչ մտաւ Պարսկական աղանդաւորոյ իր Վարս, Ներսէ, Վարձաւոր եւ Մանածիւր ընկերակիցներուն հետ:

Հայ Եկեղեցին կը պանծայ այս եօթնեակին տօներով, վասն զի այդ սուրբերը գրաւական մըն են թէ ինք փորձուած է եւ ոսկիի նման մաքուր է, ունեցած է իր պրօպագանդիկ Մուքիստաններու Սուկաւէս լեռը, քաղաքական դաճաղրիութենէն վերջ կրօնականով տուելի եւս ամբողջութեամբ՝ Մեծն Սահակի միջոցով, եւ վերջապէս իր խիկ ծոցէն ելած սուրբերու բարեխօսութիւնը: Ահա թէ ի՞նչ կը ցուցնեն մեր Շարակոնները Ս. Ատովմանց Զօրավարներուն նուիրուած «Աղայեմի գեղ», Ս. Սուքիստանց նուիրուած «Սնուգութեամբ տեղեկացեալ» Ս. Ոսկեանց նուիրուած «Որ արժանաւորեցայ» եւ Ս. Սահակի նուիրուած «Որ յարմարեցայ» սկզբնաւորութիւններով հայեւանման կտորները:

ԳԱՋՐԻՆ



ԿԵԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

ԻՆՁ ԵՆՔ

ՈՒՐԿԷ ԿՈՒԳԱՆՔ

ՈՒՐ ԿԵԹԱՆՔ

Անյիշատակ ժամանակներէ ի վեր մարդկութիւնը հետաքրքրող հարց մը կը կազմեն վերի երեք հարցումները, որոնց վնասական, որոշ պատասխան մը տալու անկարող գտնուել է ցարդ գիտքիւնը, իր ամենեւնի յանդուգն արտայայտութիւններուն մէջ՝ կասկածը, տարակոյր միայն ծնուցանելով միտքերու մէջ՝ իր առաւել կամ նուազ տարած վարկածներով, իրեն համար որոշեալ սահմանէն դուրս խնդիր մ'ըլլալով զոյութեան ծագումն եւ նպատակը: Այս խնդիրը շօտափող գրեթէ մը, Ֆրանսացի ծանօթ հեղինակի մը՝ LÉON DENIS-ի կողմէ գրի առնուած՝ յատկապէս «Տանար»-ի համար քաղաւածաբար բարգմանած ըլլալով համակիր աշխատակից մը, հանդիմով կը սկսինք հրատարակել անոր կարեւորագոյն եջերը՝ պարբերաբար: —

ԱՆՈՒՅ՝ ՈՐՈՒՔ ԿԷ ՏԱՌԱՊՈՒՆ

Ձեզի, ո՛վ եղբայրներս եւ քոյրերս մարդկութեան մէջ, ձեր ամենուն զոր կեանքի բնուէքած է, զոր դժնդակ պայքարները, հոգեւն ու փորձութիւններն ընկճած են, ձեզի՝ է որ կը ձօնեմ սոյն էջերը:

Ձեզ համար, ո՛վ վշտագնահանք, աշխարհիս ժաւանգագութիւնը, կը գրեմ՝ գանձք:

Ճշմարտութեան եւ յառաջգիմութեան խոնարհ առհրապ, անոնց մէջ զրի հսկումներու պատուը, խոկումներս, յոյսերս, ամէն ինչ որ զիս սփոփած, զօրացուցած է այս աշխարհի ընթացքին մէջ:

Իցի՛ւ թէ անոնց մէջ գտնելք մէկ քանի օգտակար գաւեր, քիչ մը լոյս՝ լուսաւորելու համար ձեր ճամբան:

Իցի՛ւ թէ սոյն համեատ գործն ըլլար ձեր արամահար հոգիին համար, ինչ որ է ստուերը՝ արեւակէզ աշխատողին համար, ինչ որ է՝ անջրդի անպատին մէջ՝ ջինջ ու զով աղբիւրը, որ կ'ընծայուի պապական ուղեւորին աչքերուն:

ՀԵՂԻՆԱԿԻ

Ա.

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ո՞ր մարդ, լուսթեանս եւ մտամբոյն ման
ժամերուն, հարցաքննած չէ երբեք ընու-
թիւնն ու բուն իր սիրտը, պահանջելով
անոնցմէ իրերու զաղանիքը, կեանքի պատ-
ճառը, փիեզերքի գոյութեան իրաւունքը:

Ո՞ւր է անիկա, որ երբեք չէ ճգնած
ճանչնալու իր ճակատագիրը, վերջնելու
մահուան քօղը, գիտնալու թէ Աստուած
առաւուրել մ'է թէ իրականութիւն մը:

Զկայ մարդկային էակ մը, որքա՞ն ան-
հոգ ըլլայ ան, որ խորհած չըլլայ սոցն ա-
հեղ խնդիրներուն վրայ: Զանոնք լուծիւ
զժուարութիւնը, անոնցմէ ծնած վարկած-
ներուն անկապակցութիւնն ու բազմաու-
րութիւնը, տարածուած դրութիւններու
մեծամասնութիւնէն բխած սղբալի հե-
տեանքները, այս ամէն շփոթ ամբողջու-
թիւնը, մարդկային միտքը յոգնեցնելով,
անտարբերութեան եւ սկսպտութեան մէջ
ձգած է զայն:

Սակայն մարդս պէտք ունի այն շո-
ղին՝ որ կը լուսաւորէ, յոյսին՝ որ կը մխի-
թարէ, ստուգութեան՝ որ կ'առաջնորդէ
եւ կը զօրացնէ:

Անիկո ունի նաեւ միջոցը՝ ճանչնալու,
կարելիութիւնը՝ տեսնելու ճշմարտութեան
քօղապերժուելը զինք պատող մառախուղնե-
րէն ու զմեզ ողողելն իր բարեբար լոյսով:

Ասոր համար, անիկա պարտի հեռանալ
ընկալնող դրութիւններէ, իջնել իր սրտին
խորը ու մտիկ բնել այն ներքին ձայնին,
որ կը խօսի ամէնուն եւ զոր չին կարող
խտրել իմաստակութիւնները:

— Բանականութեա՛ն ձայնին, խղճի
ձայնին:

Այդպէս ըրի ես: Երկար ատեն խորհե-
ցայ կեանքի եւ մահուան առեղծուածնե-
րուն վրայ, յարատեւութեամբ չտիկցի
այդ խոր անդունդները: Բունն կոչ մը
ուղղեցի յաւիտենական Իմաստութեան, ու
Անիկա պատասխանեց ինծի, ինչպէս որ կը
պատասխանէ բարիքով, սիրով ոգեւորուած
ամէն հոգիի:

Ակներեւ սաղայոյցներ, ուղղակի գիտո-
ղութեան իրողութիւններ, եկան հաստա-

տել մտածումին հետեւութիւնները, ընծա-
յել համոզումներուն՝ հաստատուն եւ ան-
խախտելի խաբխի մը:

Կաակածելէ ետք՝ հաւատացի, ուրանալէ
ետք՝ տեսայ: Ու խաղաղութիւնը, վստա-
հութիւնը, բարոյական ոյժն իջան մէջս:

Ասոնք այն բարիքներն են, զորս նման-
ներուն օգտակար ըլլալու փափաքող սրբ-
տիս անկեղծութեամբ, կուգամ ընծայել
անոնց, որոնք կը տառապին եւ կը յու-
սահատին: Լոյսի պէտքն աւելի ստիպո-
ղական կերպով զդալի եղած չէ երբեք: Ան-
հուն փոխակերպութիւն մը կը կատարուի
ընկերութիւններու ծոցին մէջ: Երկարաշար
շարեր, իշխանութեան սկզբունքին ծառա-
յելէ ետք, մարդը՝ երթալով՝ կը տեսայ
թօթափել ամէն տրգելք եւ անձամբ վա-
րել ինքզինք:

Երբ քաղաքական եւ բարոյական հիմ-
նական օրէնքները կը բարեփոխուին, կրօ-
նական հաւատալիքներն ու հաւատքը՝
դէպ ի վարդապետութիւնները, կը տկարա-
նան, պաշտամունքներն ալ կը լքուին:
Ազատութեան հետեւանքներէն մէկն ալ
այդ է, խղճի եւ մտքի իրերուն պատ-
շաճեցումներ մէջ: Ազատութիւնը, ամէն
տեղ, կը ձգտի բռնադատութեան եւ իշխա-
նութեան տեղն անցնել:

Մէկ քանիներու իրաւունքը՝ ամէնուն
իրաւունքն եղած է. բայց, որպէս զի այս
գերազոյն իրաւունքը համաձայն ըլլայ
ճշմարտութեան եւ բերէ իր պատեղները,
պէտք է որ բարոյական օրէնքներու ծա-
նօթութիւնը դայ կանոնաւորել անոր զոր-
ծադրութիւնը:

Որպէս զի ազատութիւնը բեղմնաւոր
ըլլայ, որպէս զի ան՝ մարդկային գործե-
րուն ընծայէ ապահով եւ տեւական խա-
րխի մը, պարտի կատարելագործուած
ըլլալ լոյսով, իմաստութեամբ եւ ճշմար-
տութեամբ: Ազատութիւնը, ազէտ եւ մոլի
մարդոց համար, չնամոյր հզօր զէնքի մը,
աղու ձեռքերու մէջ: Զէնքը, այս պարա-
բագային, ետ կը դառնայ յաճախ զինքը
կրողին դէմ եւ կը վիրաւորէ զանիկա:

ԼԷՈՆ ՏԵՆԻ

(Շարունակելի)

Կ Ո Չ

Սառնամանի՛ք. բո՛ւք, բորա՛ն :
 Փողոցները կամ ճամբան
 Ո՛չ ոսնածայն, ոչ մի դեմք
 Չ'երեւիր դուրսն ոչ մի հետք :
 Սոսկ քուտաւ մը կը դողա՛յ...
 Յուպը ձեռքը մայրին վրայ :
 Մի՛ կրճատե՛ք, ներս առե՛ք
 Դա Յիսուսն է վճաքեկ :

Օրերով մերկ... անսրա՛ղ...
 Կը սրւայի հեզն, աւա՛ղ.
 Ոչ ոք իրեն կարեկից՝
 Շատերն զարկին անոր կից.
 Շատերն անոր քափեցին
 Թուք, մուք, լուսանք գրուխին :
 Պատառ մը հաց դուք սրեք
 Դա Յիսուսն է վճաքեկ :


Յուրեքն սաստիկ կասկապուս
 Արցունքն աչիքն ա՛ն, պուս, պուս.
 Կը կաքկըքե՛... կը յաճի...
 Դեմքն վրայ խաւ արծի :
 Տարե՛ք զանի տուն, արի՛,
 Հիմա կ'իյնա՛յ... կը մարի՛...
 Բուռ մը կրակ շու՛ք, տուե՛ք
 Դա Յիսուսն է վճաքեկ :

Մի՛ հարցերով նորոգեք
 Սրտին փափուկ՝ խորունկ վերք.
 Իր կեանքն ամբողջ արեխաւ
 Տրուաւ մըն է սրտաւարժ.
 Մոռցուցե՛ք դուք քե՛ կրնաք
 Իր ցաւերը անօր՛նակ.
 Համբուրեցե՛ք, զգուցե՛ք,
 Դա Յիսուսն է սրտաքեկ :

ՍԵՐԱՍՏԻԱ

ԼՈՒՍՆԹԱՊ

ՅԱՌԱՋԻԿԱՅ ԿԻՐԱԿԻ
 20 Փետր. կես օրէն ետք ժամ 4¹/₂
 ԿՈՄԻՏԱՍ Վ. Ի ՄԵԾ ՀԱՄԵՐԳԸ
 ԲԵՐԱ, ԻՆՏԵՆ ՅՐԱՆՍԻՉԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ



ՄՈՌՅՈՒԱԾ ԷԶԵՐ

Ողբացեալ Մը. Հ. Մ. Ալէն հաղուագիւտ
 տիպար մ'էր ամերիկեան միսիօնարութեան մէջ,
 որ ամերիկացիներու նկատմամբ շահու աղնկալութե-
 նէն, ջերմ սիրով մը կ'աշխատէր Հայ ժողովուր-
 դին ու եկեղեցիին բարձրացման եւ ազնուացման
 գործին, ու խորունկ յարգանք մ'ունէր Հայ Ս. Ե-
 կեղեցիին վրայ : Թանօթ է անցեալ տարուան «Ա-
 մէնուն ճարտարացի»-ին մէջ իր հրատարակած եւ
 օրաթերթերու մէջ ալ արտատպւած յօդուածը,
 «Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին»
 խորագրով, արդեւնք իր համբերատար ուսումնա-
 սիրութեանց եւ պրպտումներուն՝ Հայ մատենակ-
 գրութեան դասար էջերուն մէջ, որ խորունկ
 գմայլով մը յառաջ բերին իր մէջ, մեր սրբազ-
 նատուր Եկեղեցիին աւետարանական ուղղութե-
 անութեան վրայ : Նոյն խորունկ յարգանքը առիթ
 չէր փափցներ յայտնելու Հայ Եկեղեցիին եւ Հայ
 Ժողովուրդին հանգէպ, իր գրեթէ բոլոր գրու-
 թիւներուն մէջ ալ : Իբրեւ աղագոյց յառաջ կը
 բերենք հետեւեալ յօդուածը՝ Աւետարանի
 անցեալ տարուան թիւերէն դրեթէ դիպումաւ
 բար ընտրելով.

ԱԶԳԸ ԵՒ ՍԲ. ԳԻՐԲԸ

Եթէ ինձի հարցուի, Հայ ազգին ազա-
 նացող մեծագոյն վտանգը ի՞նչ կը կարծէք,
 պիտի պատասխանէի առանց վարանման,
 Սբ. Գիրքին զանցառումը : Ամէն ուրիշ առե-
 րեւոյթ վտանգներ այս զանցառութեան
 արդեւնքն են լոկ : Հայերն ազգովին Սբ.
 Գրոց պաշտպան եղած են : Իրենց տառա-
 պանքի եւ տառանքի պատմութիւնը զայս
 կ'ապացուցանէ : Իրենց պատկոտանքը հան-
 դէպ անոր՝ բազմաթիւ դարերու ժառան-
 գութիւնն է եւ չկրնար դիւրաւ արմատա-
 խիլ ըլլալ : Թէ՛ Լուսաւորչականները, թէ՛
 Աւետարանականները՝ կ'ընդունին Աստու-
 ծոյ Խօսքին նուիրականութիւնը, եւ միշտ
 պատրաստ են դիմադրել անոր ամբողջու-
 թեան սպառնացող ունէ բանի : Սբ. Գրոց
 գործնական զարմածութեան մէջ Աւետա-
 րանականները մայրենի եկեղեցիին վերա-
 բերող իրենց արեւակից եղբայրներէն աւե-
 լի առաջ անցած են՝ նոյն Սբ. Գիրքը ար-
 դի աշխարհաբարով կարդալով, երկրորդ
 եկեղեցիին կանոնաւոր պաշտամունքին
 մէջ Սբ. Գիրքը քարոզելու կանոնաւոր
 զրութեւն մը որդեգրելով, եւ երրորդ Սբ.

Գիրքը ընտանեկան աղօթքի ժամանակ գործածելով: Մենք զիտենք թէ Ազգային Եկեղեցիին պատկանող մեր եղբայրներուն մէջ բացառութիւններ կան, և թէ հետզհետէ կը շտանան անոնք որ կը Զաննան Սբ. Գիրքը իրենց ընտանեկան կեանքին մէջ բերել, իրրեւ գործնական օրէնք ու առաջնորդ: Սակայն մեր խօսքը ժողովրդին ստուարագոյն մասին վրայ է, որու ծանօթ չէ Սբ. Գիրքը այն գործնական կերպով որով ըլլալու է: Սակայն քաջաշնորհ կան իրողութիւն է թէ կղերականներէ ու մանք և բարեպաշտ ու խոհուն աշխարհականներէ անոնք սկսած են այս լուրջ հարցին վրայ մտածել և հարցնել. — Ինչպէս տեղ է ընել Աստուծոյ օրէնքը, որպէս յայտնուած է Սբ. Գրքին մէջ, աւելի արդիւնատու դարձնելու համար մեր ազգային ու անհատական կեանքին մէջ:

Նոխարդ խմբագրականով մը արդէն զգուշացուցած ենք յախուսն և բացարձակ վճիռներ արձակելու վտանդին դէմ: Սակայն վստահ ենք թէ իրաւունք ունինք ըսելու թէ Աւետարանականներու մէջ անգամ, որոնք Աստուծոյ խօսքը իրենց միակ խորթիւրդ գաւառած են, Սբ. Գրքի կանոնաւոր ուսումը սկսած է անտեսուիլ, ինչպէս չէր ըլլար երբեք: Արդեօք մեր երկստասարդները Սբ. Գիրքը զիտեն ու անոր պատուէրները իրենց ամենօրեայ կեանքին մէջ կը կիրարկեն, ինչպէս իրենց հայրերը գիտէին ու կը կիրարկէին երեսուն քառասուն տարի առաջ: Արդեօք ընտանեկան աղօթքի սովորութիւնը կը պահուի՞ ինչպէս սովորութիւն էր տարիներ առաջ: Օրումս գործը և խնդիրները մուսցութեան մատնած են թէ մատնած չեն Սբ. Գիրքը իրրեւ զիրք օրէնքի և յայտնութեան, Մեր ընթերցողները կրնան այս հարցումներուն առանձինն պատասխանել և դատել թէ իրաւացի՞ է արդեօք մեր կարծիքը Հայ ազգին մեծագոյն վստահին նկատմամբ: Բացառական կողմն է այս: Սակայն կայ զրական կողմն ալ: Համառօտիւ պիտի յիշենք քանի մը բաներ որոնք Հայ ժողովուրդին համար պիտի ըլլան, կը կարծենք, Սբ. Գրքի գործնական ու հոսանքուն ու

սուսնասիրութեան շնորհիւ: Մեր բարեկամներէն մին, որ հաւատարիմ անգամ է Ազգ. Եկեղեցիին և որու քրիստոնէական կեանքը բոլոր զինք ճանչցողներուն օգտակար եղած է, առանձին խօսակցութեան մէջ յաճախ կը բացատրանայ թէ ինչ կրնանք ընել մեր քրիստոնէական կրօնը մեր առնորդուն մէջ բերելու և տունը Եկեղեցիին կապելու համար: Անոր կը պատասխանենք թէ բան մը կայ որ այդ օրհնելու ու կենսական արդիւնքը պիտի տայ եւ այն բանը Սբ. Գիրքն է: Բաւական չէ մէկ երկու Սբ. Գիրք ունենալ ստան մէջ: Սբ. Գիրքը յաւուր չէ, այլ զիրք մը՝ որ ուրիշ գիրքերու նման լաւ ու չարունակ սերտուելու է: Հայր մը կրնայ օրէնքի վրայ զրուած լաւագոյն գիրքը դնել և տան մէջ պատուաւոր տեղ մը դնել: Կրնայ կրթեմն երբեմն վար առնել և քանի մը էջ կարդալ իր ազուն, զոր կը բաղձայ օր մը փաստաբան ընել: Սակայն ստով փաստաբան չըլլար ազուն: Նմանապէս եթէ ծնողներ կ'ուզեն որ իրենց զաւակները միմեան ու Քրիստոնէայ այրեր ու կիներ ըլլան՝ կեանքի բարձրագոյն սկզբունքներուն նախընտրած ու ազնուագոյն գաղափարականներով ապրող, բաւական չէ Սբ. Գիրքը առանձին զրատան մէջ պատուաւոր տեղ մը դնել և երբեմն երբեմն անոր գիմել: Մեր մանչերը և ազգիկները Սբ. Գրքի սկզբունքներով ու գաղափարականներով կրթուելու են, մինչև որ ստանք իրենց առօրեայ բնական կեանքին մօտ կազմին:

Դարձեալ, եթէ մեր կարծիքը հարցուի Հայ ժողովրդին ներկայ ազգային շարիքներուն լաւագոյն դարմանին նկատմամբ, վստահաբար կը պատասխանենք թէ դարմանն է Սբ. Գիրքը, կեանքի բարոյական եւ հոգեւոր օրէնքը՝ Յիսուս Քրիստոսով յայտնուած: Եթէ փիլիսոփայութեան վերջնագոյն դպրոցի աշակերտ մը հակամիտի արձամարհել սա գաղափարը թէ Սբ. Գիրքը ու է գործ ունի ընկերային եւ ազգային կեանքի արդի խնդիրներուն հետ, կը թեկադրենք որ ուշի ուշով ուսումնասիրէ պատմութիւնը: Պիտի տեսնէ թէ, իրրեւ օրինակիրք, իրրեւ կեանքի գործ-

նական իմաստասիրութիւնն եւ իրրեւ հոգիի ամէնէն խորին բաներուն յայտարար, Սր. Գիրքը ամէնէն հզօր ոյժը եղած է աշխարհի ամէնէն զօրաւոր ազգերուն ծնունդ եւ կերպարանն առեող: Եզրիպտոս, Ասորեստան, Պարթեւաստան, Հռոմ, Յունաստան, ամէնը զարգացման եւ քաղաքակրթութեան շատ բարձր կէտի մը հասան, բայց իրենց փառքերը նսեմացան եւ իրենց դրութիւնները կործանուցան: Անոնք իրենց ազգային ու անձնական կեանքին հիմ չըրին Սր. Գիրքը կամ գէթ անոր փրկարար սկզբունքները: Ընդհակառակն Հայաստան, անոնցմէ աւելի տկար, անկարողս մնաց, վասն զի Սր. Գրքը անյեղի ճշմարտութեան վէժին վրայ հաստատեց իր տունը: Արդի պատմութեան մէջ ալ ազգերը զօրաւոր եղած են՝ այն տատիճանով որով ազգային կեանքի հիմ ըրին Աստուծոյ օրէնքները եւ ապաստանութեան արդարութեան եւ զբայութեան սկզբունքները: Կառավարութիւնները, որոնք շարունակ կը փոխուին յաջորդական ընտրութիւններով, կրնան ստատիկ աշխարհամոլ եւ անձնասէր ոգի ցուցնել: Սակայն զննեցէք հիմերը որոնց վրայ հաստատուած են Սահմանադրական կառավարութիւնները, եւ ահա պիտի տեսնէք այն անմահ սկզբունքները զորոնք Սր. Գիրքը կ'ամփոփէ իրրեւ ճշմարտութիւն: Եթէ ամէն անկեղծ ու խուհուն մարդ մէկիկ մէկիկ ուսումնասիրէ այսօր Հայ ժողովրդին ներքին զժողարութիւնները, պիտի տեսնէ թէ Սր. Գիրքը եւ միայն Սր. Գիրքն է որ դարման կ'ընծայէ:

Դարձեալ, եթէ մեզի հարցուի թէ Հայերը, Լուս. Կաթողիկէ եւ Աւետարանական, ի՞նչ հիմի վրայ կրնան միանալ իրենց ազգը դատաւարակելու եւ բարձրացնելու համար, կը պատասխանենք. Սր. Գրքը հիմին վրայ: Անհրաժեշտ չէ որ ամէնը համաձայնին վարդապետական նորին կէտերու մէջ: Աստուծոյ օրէնքները, որպէս նշանակուած են անոնք Սր. Գրքի մէջ, պարզ եւ անվիճելի են: Աւետարանին ոգին արեւու պէս պայծառ է: Երբ ամէն Հայեր միասնաբար որոշեն հաստատ թէ Աստուծոյ այս օրէնքները պիտի տիրեն ազգային կեանքի ամէն

փուլերու մէջ եւ թէ իրենց հասարակաց Տիրոջ ու Վարդապետին ոգին զիրենք միացնելու է վերաշինութեան մ. ծ գործին մէջ, այն ժամանակ, բայց ոչ մինչեւ այն ժամանակ, պիտի տեսնենք այն փոփոխութիւնները որոնց կը ցանկանք ամէնաւ որոնց համար ալ կ'աղօթենք:

Հ. Մ. Ա. Լ. Ն.

ՆԵՐԿԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ներկայ ընկերվարականութեան ինպատոյ յողումներ կ'երեւան յաճախ Հայ թերթերու մէջ: Այս շարժումին յարիլ փափաքողներուն համար օգտակար եւ շահեկան է կարգալ հետեւեալ օրինակը:—

Գործատան մը մէջ կը գտնուէր Իւլանտացի մը, որուն անյողգողգ կամքն էր ընկերվարական դադափարի ծառայել: Համոզուած էր թէ բոլոր ստակ ունեցողները հաւատարմապէս բաժնելու էին զայն չունեցողներուն հետ: Դժբախտաբար իր դադափարն այնքան աւելի անյաջողութեան կը մատնուէր, որքան աւելի շատախօս էր: Օր մը գործատէրը զինքը գրասենեակ հրաւիրեց, եւ մջկերմին հետեւեալ խօսակցութիւնը տեղի ունեցաւ:

— Միքայէլ, կէս օր արձակուրդ կուտամ քեզ:

== Շնորհակալ եմ, պարոն:

— Տուն ունիս, անոնի չէ՞, Միքայէլ:

== Այո՛, պարոն, պատասխանեց գործատէրը հպարտօրէն:

— Դրամաւունն ալ հարիւր տկլո՞ ունիս:

== Այո՛, պարոն, ըսաւ գործատէրը զարմանքով:

— Յովհաննէսը լաւ կը ճանչնամ:

== Այո՛, կը ճանչնամ: Ինձի դրացի է, եւ Տ. Թիլինի տունը վարձքով կը բնակի: Ութ տարի քովս աշխատած է, եւ քսանը հինգ ոսկի պարտական է ինձ: Խեղճը չարաչար կ'աշխատի երկու աղաքներով եւ շատ զժողարաւ ապրուստը կը ճարէ:

— Բաւ աղջիկդ Մարիամ տա շաքիւրտ:

բարձրագոյն վարժարանէն շրջանաւարտ
պիտի ըլլայ :

— Այո՛, տէր : Կարգին մէջ առաջին է :
Աստուած օրհնէ զինքը :

— Երկու աղաքդ ալ վարժարան կը
յաճախեն :

— Այո՛, պարո՛ն, եւ լաւ կը յառաջ-
գիմեն :

— Շատ աղէկ, Միքայէլ : Անշուշտ կը
փափաքիս ստացուածքիդ կէսը դաշինքով
Յովհաննէսին թողուլ : Կէս օրին հոս կի՛նք
պէտք եղած թուղթերը հետ բերելով, եւ
եւ ձեզի համար վկայ պիտի գտնուիմ :
Բոլոր բակիքս տա է, Միքայէլ, լարի
յաջողութիւն :

Միքայէլ աչքերը քթիկով եւ դիտարկը
խլկով դուրս ելաւ : Դանի մը վայրկեանէն
դուռը զարնուեցաւ : Միքայէլ կիսախուփ
դռնէն զուրկը կրկնցնելով՝

— Եթէ կէսը Յովհաննէսին տամ, կը
փճանամ, ըսաւ, եւ դուռը ուժով մը
քաշեց :

ԱՌԱՋԵՈՐԴ

ՄԱՍՈՒՍ ԱՂՈԹՔԸ

Լիալուսին դէմ նստած
Մամա աղււթը կ'ընէ սղօթքն իրիկումն.
Դըլիսուն վերեւ սեւ չըղջիկներ կը դառնան,
Իսկ կայ սըրտին մէջ Աստուած :

Շըթթունքներն իր (սո՛ւրբ վարդեր
թուումը առջեւն Աստուածամօր խորանին)
կը շարժին ա՛յնքան մեղմորէն, որ հոգին
իւր ըսածն ի՛նք չի լրտեր :

Յուրա շողին տակ լուսինին
Հանդարտօրէն կը կախուի վար գլուխը ծե՛ր,
Տըխրահա՛մ, խո՛նջ, իբրեւ նմանիլ ան ուղիւ
Մեր այս դարուն հաւատքին :

ՀԱՅՐ ՄԵՐ . . . — Բայց չի՛ դառնար ա՛լ
Դարուն հին, մա՛մ, կալերուն երգը աղու.
Արեւն ետ չի՛ շեղիր զարկէն, վալլելու
Իլձդ արթնցաւ, — բայց մահն ալ :

ՈՂՋՈՒՅՆ . . . — Բայց միշտ պիտ' պարտալ
Մընան սկիւրդ՝ ծիծաղի մեծ հոտնքէն,
Եւ մերթ բեզմն կողերուդ մէջ պիտ' լրտեն
Ա՛լ հին սէրերն հըրտտալ :

Բայց, ո՛հ, դիտեմ, դու ծարու
Ես երկընքին՝ որուն մինչ ցարդ հաւտացիր,
Որուն համար մարմինդ միշտ ծընրադիր
Հոգւոյդ առջեւ ապրեցաւ :

Երկինքը քուկդ է, ո՛վ մամ,
Դանի որ ծեր բիբերուդ մէջ դեռ անդը
Մնաց անոր կապոյան տմէն ամպէ վերծ.
Դանի որ, մայր բարեխնամ,

Արիւնիդ հետ միասին
Ծիծերըդ հինգ սերունդներու քամեցիր
Եղար աննհագ, — եւ բարձե՛դ մաս չըտըւիր
Օտարներու գըլտխին :

Եւ հիմայ որ, ո՛վ հանիս,
Ճերմակ մազերդ լուսնին խառնած, մեր կրօնքին
Փռլերուն վրայ կոնդուր կը մեռնիս ծեր եւ կին
Պիտ' վաղը կո՛յս վերածնիս :

Դ.Ա.Ե.Ի.Է.Ն. Վ.Ա.ՐՈՒԺ.Ա.Ն.

(ՀՈՂ-ԴԱՐ, Սերասիոյ)

ՄԱՍԼՈՅ ԱՐՁԱԳԱՆԳ

ԴՐՈՒԱԳ ՄԸ ՀՈԳԵԼՈՅՍ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԿԵԱՆՔԷՆ

Յունվ. 4 էն սկսած է հրատարակուիլ հայա-
տառ թուրքերէն ամսաթիւր ընդ «Հիւսնը Նիկէթ»
Տնօրէն — Խմբագրութեամբ Յակոբ էֆ. Վարժա-
պետանի, մամուլը երկարամեայ աշխատուոր մը
Խմբագիր «Ճէրիսի Եւրօպէի» Այդ ամսա-
թիւրէն, որ կարեւոր պակաս մը լեցնելու կոչուած
է եւ արժանի է քաջալերութեան, թարգմանա-
բար կը քաղենք հետեւեալ ուշագրաւ տողերը՝
աւէտ ողբացեալ հոգեւոյ Հայրապետին առա-
ջին Պատրիարքութենէն հրաժարման պարագա-
ներուն վրայ Յօդուածագիրը՝ Ա. Մ. կը պատ-
մէ. —

«1896 Յունիսին էր. մէկ քանի օրէ ի
վեր կը խոսուէր թէ Պատրիարքը այլեւս
պիտի հրաժարի, եւ պէտք է որ հրաժարի :
Այն ատեն լրագրաց մէջ այս տուած ըսն
չէր կրնար գրուիլ : Իզմիրլիոն Ս. Պատ-
րիարքարան կ'երթեւեկէր, մերթ ընդ մերթ
քաղրիւր կը գրուէր, եւ քեզեհեներ ալ
կուղային . բայց այդ յարաբերութիւնք ան-
ձի հետ չէին, այլ Պատրիարքարանի հետ :
Անգլ. զեպանը զաղանաբար իմացուցած
էր Պատրիարքին թէ քաղաքականութիւնը
փոխուած է եւ ուժ չպիտի կրնար տալ ի-
րեն : Յարութիւն Փաշա Տատանն եւ վրա-

տանելի անձի մը միջոցով լուր ղրկած էր որ այլ ևս պէտք է հրաժարի : Աստուծոյ Իզմիրլեան Ս . Պատրիարքարանի յարաբերական դիւանի պետ Կարապետ էֆ . Խաչատուրեանը կանչած և կառավարութեան զրոյս էր թէ անձնական տկարութեան պատճառով պարտաւորութեամբ է հրաժարիլ» :

Յօդուածագիրը, նկարագրելէ ետքը այս լուրէն կրած ախուր տպաւորութիւնը, կը պատմէ իրողութիւնն ստուգելու համար նախ Պատրիարքարան յետոյ նոյն ինքն Ս . Պատրիարքին Հիտար Տիպիի բնակարանն այցելելը, դժնէադէմ լրտեսներու վոհմակի մը մէջէն : Եւ կը շարունակէ .

«Իզմիրլեան Ս . ի դէմքին սովորական տխրութեան տեղ ա՛յն օրը կը նշմարուէր քաղցր գոհունակութիւն մը : Վրայէն ամենամանր բնու մը նետելով յագնութիւն սուսնով անձի մը երեսոյթն ունէր : Ասկէ քաջալերուելով համարձակեցայ լսել .

— Ձեր հրաժարումն ամբողջ ազգը յուսահատութեան մասնեց, կայծակնաւոր բրաւ մեղ : Ասիկա շատ ծանր պիտի կշռէ մեր ներկային և ապագային վրայ :

Այսօրուան պէս կը յիշեմ տուած պատասխանը, որուն մէջ կը յայտնուի իր վսեմ մեծանձնութիւնը .

— Յուսահատելու տեղի չկայ, բաւ . անձերը կուգան կ'անցնին, բայց ազգը կը մնայ : Պատմութիւնը ինձ նման շատեր արձանագրած է : Ես փափաքեցայ ծառայել ոչ միայն ազգին, այլ ևս տէրութեան . բարենորոգում պահանջեցի իբրեւ զլիաւոր միջոց Հայրենիքին փրկութեան : Ուղեցին զիս թշնամի ներկայացնել Հայրենիքին, բայց անոր ամէնէն հաւատարիմ զաւակն եմ ես : Ապտիւլ Համիտ ո՛չ փափաքող է ևս ո՛չ ալ կարող՝ ի դարձ զնկուս այս բարենորոգումը, որովհետեւ այսօր Անաստուի մէջ քուրդ պէյերու և աղաներու այնքան մեծ ազդեցութիւն մը տուած է զոր կարելի չէ եւս տանել : Այս նպատակով Եւրոպական պետութեանց ղեմնցի, իրենց խոտուածին կատարումը խնդրելով : Ասիկա հրաւեր չէր նոր միջամտութեան մը, այլ արդէն ծանօթ եւ օրմ . կառավարութեան կողմէ ստորագրուած Պերլինի

զաշնագրի մէկ յօդուածին գործադրութիւնը : Լեւոնեղու համար պէտք էր պատասխան ներկայացնել զիս, Թուրքերուն թըշնամի, Կայսեր անհաւատարիմ : Եւ ըրին : Ես կ'ուզէի հրաժարիլ Պապը Ալիի դէպքէն ետքը, բայց ժողովներն եւ կարգ մը վաստիկի անձեր չթոյլատրեցին : Այսօր անոնք ալ կը հաւանին հրաժարմանս : Ես կը վախնամ Պատմութեանէն . ո՛վ որ զիս պաշտօնի կոչեց, ա՛յն պէտք է ընդունի հրաժարականս : Եթէ հնար ըլլար, Ազգ . Ժողով կը գումարէի, եւ ա՛նոր կը մատուցանէի հրաժարականս :

— Բ . Դրան դէպքին սէջ օտարի մաս կ'ա՛ր :

— Ասիկա գաղանիք մ'է որ այսօր չի կրնար լուսաբանուիլ : Բայց չեմ կրնար երեւակայել Հայ մը որ այսպիսի վատութիւն մը կարենայ մտածել ազգին համար . Արդէն ապացոյցներ կան թէ ոստիկանական նախարարը (Նազըմ Փաշա) անդիկութիւն ունէր դէպքէն 7-8 օր առաջ : Ասիկա թակարդ մ'էր մեր ազգին դէմ : Նոյն իսկ մտադրութիւն կար զիս Բ . Դուռը տանելու պատրուակով ճամբան բղքել առ խուժանին : Ասիկա՛ ալ կրնար ըլլալ, բայց կը ցաւիմ որ ազգիս օգուտ մը չպիտի ունենար :

— Գործերն ի՞նչ երևոյթ պիտի առնեն ձեր հրաժարումով . նպատաւոր բան մը յուսալի՞ է :

— Բնաւ . թերեւ 10 հոգի բանտէն արձակուին, բայց յաջորդ օրը 30 հոգի կը ձերբակալուին : Այս քաղաքականութիւնը չի փոխուիր : Ապտիւլ Համիտի շուրջը զըստնուները պիտի փառաբանեն իր յաղթութիւնը, և չնորհներու, պարզեւերու պիտի արժանանան . բայց մեղ նման ինզճ ազգի մը յաղթել մեծ գո՛րծ մ'է : Իրերը պիտի շարունակուին ըստ առաջնոյն, մինչեւ որ կա՛մ մեծ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՄԲ մը երկրին վարչական դրութիւնը փոխուի, և կամ օտար միջամտութիւն մ'ըլլայ : Այս երկուքէն ուրիշ ճամբայ չկայ փրկութեան : Ամենամեծ յիմարութիւն մ'է բարիք յուսալ Ապտիւլ Համիտի կառավարութեանէն :

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՐԸ

ՆՈՐԱՆՏԻՐ ՏԵՂԱՊԱՆԸ

Անցեալ թիւին մէջ երկու տողով կը ծանուցանէինք Գեր. Տ. Վահրամ Ս. Արքեպ. Մանկունիի ընտրութիւնը պատրիարքական տեղապահութեան պաշտօնին: Նորին Սրբազնութիւնն ընտրուեցաւ Սաւոն ժողովոյ ներկայ 15 անդամներու ջինքով: Ինչպէս ինչպէս 6 քուէներուն 4ն ստանալով Նիկոմիդիոյ Ս. Աւետիքոսի, 1 քուէ Տ. Գաբրիէլ Նայ. Ճէվանիւրճեան, և 1 քուէ ալ սպիտակ: Կեդրոնի և ձախակողմեան երեսօտիսաններու կողմէ տեղապահութեան ընտրելի նշանակուող չորս կախակողմէն միայն Տ. Վահրամ Արքեպիսկ. Մանկունի էր որ երկու կողմէն ալ ցուցուած էր: Այս իրողութեան վրայ, Վարչութեան մէկ անդամին կողմէ ուղղուեցաւ նախապէս հաւանութիւնն առնել Ն. Սրբազնութեան որ պատասխանեց թէ որպէս զի Վարչութիւնը վստահ ըլլայ թէ իրեն տեղապահական պաշտօն յանձնուելու պարագային պիտի կրնայ վարել զայն բոլոր արժանաւոր, լաւ կ'ըլլայ որ ազգային շրջանակի մէջ պաշտօն վարող րժիշկ մը քննէ զինքը, և եթէ հիւանդ և անկարող չգտնէ, ինք ալ ընտրելի կը ներկայանայ: Պահանջուած քննութիւնը կատարեց Տ. Թէրզեան էֆ., որ հաստատեց թէ Տ. Վահրամ Արքեպիսկ. տեղապահութեան արգելք չէ տեղապահական պաշտօնին: Այս սովորութեան վրայ գիտակցօրէն կատարուեցաւ ընտրութիւնը:

Տ. Վահրամ Ս. Արքեպ., ընդ Պրուսայի, Հոգեւոյ Տ. Գէորգ Դ. Կաթողիկոսի Ձեռնասուն, 35 տարեի ի վեր եպիսկոպոս է Հայ Ս. Եկեղեցւոյ, որուն ծառայած է հաւատարմօրէն և աւանդապահ ողիւմ: Մինչև նոյն Հոգեւոյ Կաթողիկոսին մահը մնացած է Էջմիածին, Ս. Հայրապետին անձնական քարտուղարի և գաւազանակրի պաշտօնով: (*) Տ. Մակար Ս. Կաթո-

(*) Ս. Էջմիածնի մէջ կարեւոր մասնակցութիւն մ'ունենցաւ ձայնագրեալ շարականի պատրաստութեան ու տպագրութեան մասնագիտական ձեռնարկին, որ յաջողակ էր զլուսն ելած է:

գիտապատմէն ետքը Պալիս դարձաւ 1885ին, և անկէ ի վեր կը մնայ Օրթագիւղ՝ քարոզական պաշտօնով: 1896ին էր որ Ազգ. Վարչական շրջանակի մէջ մասն, գործօն դեր մը ունենալով: Բռնակալութեան աւանդն արհաւիրելի օրերուն, Տ. Վահրամ Ս. իբրեւ ժողովական՝ բաւական ընդգիծեալ դեր մը և բողոքող մը եղաւ Համեստեան կառավարութեան օրինակութեան, առանձնաշնորհմանց սեղմումներու, Ազգ. Սահմանադրութեան վերաքննութեան պահանջումներու դէմ, այնպէս որ Ազգ. իրաւանց պահպանման, և անոնցմէ ոմանց գտնէ իւրեաներուն մեր ձեռքը մնալուն մէջ շատ կարեւոր բաժին մը ունեցած է Ն. Սրբազնութիւնը:

Այս առթիւ շահեկան է յառաջ բերել ուշագրաւ միջոցէս մը զոր կը պատմէ Բիւզանդիոն.—

«Երբ 1896 ին Իզմիրեան Ս. իր առաջին Պատրիարքութենէն հրաժարեցաւ և Վարչութիւն մը ընտրուեցաւ կառավարութեան կողմէ Պատրիարքարանի գործերը վարելու համար, առաջին անգամ ըլլալով Մանկունի Ս. պաշտօնի զուլիս հրաւիրուեցաւ իրբեւ չեղած եկեղեցական մը: Իզմիրեան Ս. ի հրաժարականին ընդունելութենէն օր մը վերջ, եկեղեցական եւ աշխարհական պետական Սաւոն ժողովոյ անդամները, հրաւիրուած էին Պատրիարքարանի դահլիճը՝ լսելու համար պալլուրըն զոր կրօնից տեսուչ Ձիվէր պէյ բերած էր Պատրիարքարան: Մեկտախիլ լուսթիւն մը կը տիրէր Պատրիարքարանի ներսը ու դուրսը, և այս պահուն Պատրիարքարանի դահլիճին մէջ Ձիվէր պէյ կարգաց պալլուրըն: Բոլոր ժողովականք շուարած իրարու երես կը նայէին. նոյն միջոցին էր որ ներկաներէն Մանկունի Ս. յառաջանալով բոլոր Ձիվէր պէյի:

— «Կառավարութեան հրաւերին պատասխանելով այստեղ եկանք այսօր, բայց հիմայ կը լսենք թէ Պատրիարքարանի գործերը վարելու և տեղապահ մը ընտրելու պաշտօն կը արուի մեզի: Պէտք է ճշդեմք նախ թէ Սահմանադրութիւնը դադարեալ է թէ ոչ, և թէ այս պայմաններուն մէջ պի-

տի կրնանք ստանձնել մեր պաշտօնը և տեղապահ ընտրել. ուստի կը խնդրենք որ մեզ առանձին թողուք այս մասին խորհելու համար» :

«Զիվէր պէյ այս անակնկալ յայտարարութեան առջեւ չուարած մեկնեցաւ, և անկէ վերջ բոլորն վէճ մ'սկսաւ մէկ քանի ընդդիմադիրներու և Մանկունի Սրբազանի միջեւ, որ կ'սլուար թէ «Սահմանադրութիւնը չենք կրնար թաղել, պէտք է ճշգրտել թէ Յամիս միայն պաշտօն սխալ վարենք և Սահմանադրութեամբ Պատրիարք պիտի ընտրուի» : Վէճն այնքան սաստկացաւ որ նիստը զրուեցաւ նոյն օրը՝ առանց հետեւանքի, և յաջորդ նիստին նախ պաշտօնեցաւ որ պետական Խառն Ժողովոյ պաշտօնն առժամայէ է և օրէնքով Պատրիարք պիտի ընտրուի ու սպա Տեղապահ ընտրուեցաւ» :

Ծանօթ են Տ. Վահրամ Ս. ի մէկ քանի տարի առաջ Երուսաղէմ ուղևորութիւնն իրեն ընթաց Վանքի խառնակ վիճակին, և իր տեղեկագիրը՝ պատահած կարգ մը զեղծութիւնները հաստատող : Սահմանադրութեան հռչակումէն ետքը, դարձեալ մեկուսացած կեանք մը վարեց Օրթոդոքսի մէջ : Եւ ահա վերադառնալով կանչուի իբրեւ Պատր. Տեղապահ ծառայելու Ազգին և Եկեղեցւոյն : Իր անցեալ դործունէութիւնը հաւատարմի կ'ընծայէ մեզի, թէ Ն. Արքեպիսկոպիտը այս կարեւոր պաշտօնին մէջ ևս նոյն եռանդուն և ազգային ու եկեղեցական շահերու նախանձախնդիր սկիւղ պիտի ջանայ վարել գործերը, օգտուելով զինք չընտրատողներու համակիր արամադրութիւններէն և խոստացուած անկեղծ աջակցութիւններէն :

* Տեղապահ Ս. անցեալ եջ. առաջ նորութեամբ Վարչութեան պատուիրակներուն Պատրիարքարան իջաւ ուր ընդունուեցաւ Բաղաք. Ժողովոյ մէկ քանի անդամոց և Պատրիարքարանի պաշտօնէութեան կողմէ, որոնց ուղղած հետահարականներուն պատասխանեց պաշտօն խօսքերով, իր ստանձնած պաշտօնին անթերի կատարման համար Ազգային Ժողովոց և պաշտօնէութեան աջակցութեան

անհրաժեշտութիւնը շեշտելով, և ծանրանալով մասնաւորապէս դաւառի Հայութեան կարելի միութարութիւն ընծայելու պէտքին վրայ : Յետոյ Ն. Սրբազանութիւնը դիւաններուն յանձնարարեց՝ դիպուած թուղթերուն մանրամասն մէկ ցուցակը պատրաստել, հասկցնելու համար թէ ո՛ւրիշ եկած են, ի՞նչ է անոնց պարունակութիւնը և ի՞նչ անօրինութիւն պէտք է ընել : Նոյնպէս Յարաբերական Դիւանէն ուղեց մատուցեալ թագրիրներու ցօւցակը՝ ճշգրտելու համար թէ ո՛ր գործերուն պէտք է հետապնդել և ի՞նչ կերպով : Այս ցուցակները պատրաստուելէ ետքը Վարչութեան խորհրդակցութեան պիտի ներկայանար : Տեղապահ Ս. ը Պատրիարքարանի մէջ կը գիշերէ, և կը զբաղի Վարչութեան վերաբերեալ գործերով : Ն. Սրբազանութեան յանձնարարութեան համաձայն Պատր. փոխանորդ Հայր Սուրբը թաղերը չընթերական դրկելով պատուիրեց որ պատարագի միջոցին յիշատակուին միայն հանգուցեալ Հայրապետին և Երուսաղէմի հանգուցեալ Պատրիարքին անունները, առանց յիշատակելու Պարսկ տեղապահին անունը : Մանկունի Ս. ի կարծիքն այն է թէ Պատարագի մէջ յիշատակուելու համար կամ պաազամաւորական Ժողովով ընտրեալ Կոթիդիկոս, կա՛մ Ազգ. Ժողովոյ քուէով ընտրեալ Պատրիարք պէտք է ըլլալ, և տեղապահութիւնը՝ իբրեւ ժամանակաւոր պաշտօն՝ իրաւունք չի տար յիշատակութեան :

* Տեղապահ Ս. Հօր նախադաժնութեամբ Խառն Ժողովն առաջին անգամ ուրբաթ օր դաւաճուեցաւ, և ընդհանուր խորհրդակցութիւններ կատարեց օամ. Հայ երեսփոխաններու հետ, որոնցմէ Վարդգէս, Դեղամ և Տաղաւարեան էֆենտին երկարօրէն խօսեցան զառաւելու մէջ տեղակի ի գործ դրուած բանութիւններու վրայ : Ասանց մասին վերադառնալով պիտի ըլլայ Պատրիարքարանէն կառավարութեան մօտ, և այդ դիմումներուն ոյժ պիտի տան նաեւ Հայ երեսփոխանները : Ի մասնաւորի Ժողովին ուղադրութեան առարկայ եղան Վանէն հասած տեղեկու-

Թիւններ՝ թէ տեղւոյն աշխրէթներն սկսած են իրենց մարդոց ձեռքով սպանութիւններ կատարել եւ ոճրագործներն ալ չեն ձերբակալուած։ Խնդիր եղաւ նաեւ Մշոյ կրթական առերփրու հաւաքիչներուն ձերբակալումը, տուներու խուզարկութիւնը, Հայոց Պատմութեան դէմ հանուած արգելքը։ Մատուցանելի յիշատակագրին մէջ պիտի խօսուի նաեւ Անաստուրի գաւառներու մէջ մասին մէջ տիրող երկիւղալի վիճակին վրայ, որուն համար ապահովութիւն պիտի պահանջուի։ Պուլկարիոյ եւ Ռումանիոյ հոգեւոր հովուութեան, նաեւ Երուսաղեմի խնդիրներն ալ երկար խորհրդակցութեանց առարկայ եղան, եւ անոնց յաջող ելքի մը յանգելուն համար միջոցներ խորհուեցան։ Նոյն նիստին մէջ Սամ. Հայ երեսփոխաններու եւ Այրիախնամ յանձնաժողովի անդամոց հետ խորհրդակցութիւն կատարուեցաւ Աստնայի արկածեղաց համար պիտական պիւստէէն սահմանուած 10000 ոսկիին մասին։ Երեսփոխան տեսարք հաւատուեցին թէ նոյն գումարն յաւաքիկաց տարւոյ պիւստէէն մէջ անցած է, եւ թիւրիմացութեան մը հետեւանօք մոռցուած է ապագրութեան պահուն։ Ժողովն այս բացարկութիւնը բաւական համարելով, կարգադրութիւններ բրաւ նոյն գումարին բաշխման մասին։

* Տեղւոյն Ս. Հօր պաշտօնն հաստատուած է Կայս. Իրաւէով։

* Խառն Ժողովն որ անցեալ ուրբաթ երեսփոխաններու 1/5 ին վիճակաւ դադարումը կատարած էր, այս Դշ. ի նիստին մէջ ալ զբաղեցաւ Պուլսոյ թաղերու վիճակաւ դադարեալ երեսփոխանաց նոր բաշխում մ'ընելու, եւ որոշեց իրրեւ ընտրող ճանչնալ անոնք միայն որ իրենց Աղդ. առերփրու վճարած են. չվճարողները չպիտի կարենան ընտրող ըլլալ։— Ժողովն իր այդ նիստին մէջ որոշեց՝ ըստ Կրօն. Ժողովոյ ներկայացուցած ցանկին, զրեւ դատական նախարարութեան թէ Հայ վիճակներու տօնական օրերն են Ծնունդ, Ուրբեք, Վարդանանց, Աւետումն, Աւուր Եշ. մէյ-մէկ օր, Զատիկ երկու օր, Համբարձում, Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ, եւ Գիւտ Նըշ-խարաց մէյմէկ օր։

ՀԱՅԿ ԷՖ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ, Աղդ. Վարչութեան գործօն եւ կարեւոր անդամ եւ անօրէն Մայր Վարժարանի, ցաւալի արկածի մը կնիքարկուեցաւ անցեալ Եշ. Նոյն օր, տեղւոյն Սրբազանն Օրթոդոքս զէն Գում Դափու հրաւիրող պատուիրութեան միանալու համար երբ Պէպէքի իր բնակարանէն կ'իջնէր, զաւիւղայրին վերայ սահելով անկում մը ունեցաւ այն սատիճան սառնիկ որ նուազեցաւ եւ գիւղացիներ օգնութեան փութալով զինքը փոխադրեցին իր բնակարանը։ Անմիջապէս հրաւիրուեցաւ Տքդ. Չալիան Էֆ. որ դժբախտաբար հաստատուեց թէ ուրք կտրած է։ Ասոր վրայ հեռագրով հրաւիրուելով Տքդ. Եաղուպեան Էֆ., զանի մէջ առնուած է ուրք, անդալայանել է ուրք հիւանդը Քլօթօրումով։ Այս ցաւալի արկածը որ Տիկ. Խօճասարեանի կողմէ հեռագրուած էր Պատրիարքարան, խորապէս ազդեց Տեղւոյն Ս. ին, ինչպէս նաեւ Վարչութեան անդամոց եւ ազգային շրջանակներուն վրայ։ Ժողովոյ եւ Խորհրդոց անդամներ եւ ազգային ծանօթ դէմքեր հեռագրով եւ անձամբ ցաւակցութիւն յայտնած, եւ բժշկական ամէն խնամք չապրուած է, սրտէ ապաքինմանը համար Խօճասարեան Էֆ. ի, որուն իրրեւ արդիւնաւոր կրթական պաշտօնաց, եւ վերջին օրերս իրրեւ վարչութեան անդամ օգտակար գործունէութիւնն եւ ազգային կեանքի ճշտութիւնն եւ հաշտարար ոգին ու արամաքանող միտքը ընդհանուր համակրութիւն մը յառաջ բերած են իր շուրջը։ Դժբախտութիւն մ'է որ Աղդ. Վարչութիւնը ժամանակի մը համար կը զրկուի իր ամէնէն գործօն եւ փորձառու մէկ անդամին օգտակար աշխատակցութիւնէն։ Արագ եւ կատարեալ ապաքինութիւն կը մաղթենք մեր ազնիւ եւ համակրելի բարեկամին։

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՀԱՐԱՅՆԱԿ ԲԷՆՈՒ ԷՄԵԼԻՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ՀԱՐԱՄԱՅՐ ԲԷՆՈՒ ԿԷՋԻՐԻՆԱՆ

ՏՊԱՐԱՆ «ՇԱՆԹ»

Ղալաթիա, ձառն Գաբուսու, թիւ 9

“ՏԱՃԱՐ”-ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրու
Արսասահմանի համար	10 ֆրանք
Ռուսիա	4 բուբլի
Ամերիկա	2 օլար
Չեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ՄԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ ԴԻՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Զարմայր Փանանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեչիքթաշ, Հայոց եկեղեցի

در سعادتده بشکطاشده ارمی کلیسائنده (داجار) غزته سی مدیری پاپاس زارمایر

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue « DADJAR »
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

